01/10.1/9004-10
2010-08-03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովիկ Աբրահամյանի, Գալուստ Սահակյանի և Հովհաննես Սահակյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առարկություններ չունի։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-938-30.06.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի հանրապետության 1998 թվական մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի առաջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները եւ քույրերը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածը սահմանում է երկրորդ հերթի ժառանգների ցանկը, որի համաձայն՝ երկրորդ հերթի ժառանգներ են ժառանգատուի հարազատ եղբայրները եւ քույրերը Այսինքն ըստ էության օրենսդիրը ժառանգատուի ժառանգների թվում չի նախատեսել վերջինիս արյունակից /համահայր/ եւ արգանդակից /համամայր/ եղբայրներին եւ քույրերին։ Սա ըստ էության նշանակում է, որ օրենսդիրը ժառանգատուին առավել մոտ ազգականներ է համարել օրինակ, հորեղբորը կամ վերջինիս որդուն, քան միեւնույն հորից կամ մորից սերված եղբոր կամ քրոջը։ Մինչդեռ այս մոտեցումը արդարացված չէ ոչ իրավական, ոչ էլ բարոյական տեսանկյունից։ Ստացվում է, որ այն դեպքերում երբ ժառանգատուն տարաբնույթ պատճառներով /հիվանդության եւ այլն/ չի կարողանում կտակ թողնել, ապա օրենքի ուժով այդ անձինք չեն ժառանգում ժառանգատուի մահվանից հետո։

Հարկ է նշել, որ ներկայումս դատական պրակտիկան ընթանում է հենց այն ճանապարհով, որը ներկայացված նախագծի տրամաբանությունն է։ Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009թ-ի ԵԱՆԴ/1823/02/09 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը փաստում է, որ ժառանգական իրավահարաբերություններում ժառանգատուի հարազատ եղբայրներին եւ քույրերին հավասարեցված են նաեւ ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրերը եւ եղբայրներըե։

Սակայն պետք է նշել, որ նույնիսկ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը որպես ինքնուրույն եւ առանձին եզրույթներ, օգտագործում է հարազատ, ինչպես նաեւ համահայր կամ համամայր եղբայրներ եւ քույրեր հասկացությունները՝ տարանջատում մտցնելով դրանց մեջ։ Ուստի, ներկայացված նախագծով

ժառանգատուի երկրորդ հերթի ժառանգներ են համարվել ինչպես հարազատ այնպես էլ համահայր եւ համամայր եղբայրներն ու քույրերը։